ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1633

16.05.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիսի 12-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Թումանյանի բաժնի ՁՊՎ, արձանագրել է, որ

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԳ № 2441
17 05 2016

Խախտում՝

1. Այցելության ժամանակ ՁՊՎ-ում պահվում էին երկու ձերբակալված անձիք: Ձերբակալվածները ստացել էին հանձնուքներ, սակայն մեկ ձերբակալվածի հանձնուքը գրանցված էր, իսկ մյուսինը գրացնված չէր <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում: Դիտորդական խմբի հարցադրմանը, թե ինչու գրանցված չէ, հերթապահ մասի պետը, մեկնաբանեց, որ բաժնի պետը պետք է դիմումը մակագրի նոր գրանցեն գրանցամատյանում, իսկ բաժնի պետը տեղում չէ: Փաստենք, որ հանձնուքը ստացվել էր մեկ օր առաջ և հարգարժան հերթապահ մասի պետը տեղյակ չի իր պարտականություններից: Որովհետև՝
   - Բաժնի պետի բացակայության դեպքում, նշված գործառույթները կատարում է նրա տեղակալների կողմից և պարտադիր չէ միայն բաժնի պետի մակագրությունը:
   - Բաժնի պետի մակագրությունը, ոչ թե գրանցամատյանում գրանցելու համար է նախատեսված, այլ հանձնուքը ընդհանրապես ընդունելու: Տվյալ դեպքում անտեսվել է բաժնի պետի թույլտվությունը հանձնուք ընդունելու վերաբերյալ և անհասկանալի պատճառներով այն չի գրանցվել գրանցամատյանում:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՊՈԼԻՑԻԱՅԻ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄ ՀԾԿ 3173
«16» 05 2016թ.

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./Ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 242-1-2034 «03» 06 2016թ.

Ձեր 16.05.2016թ. թիվ 2621/1633 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Լոռու մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով հիմնավորվել է ոստիկանության Թումանյանի բաժնի հերթապահ մասի պետի կողմից ձերբակալվածին հանձնուքը փոխանցելուց հետո <<Հանձնուքների հաշվառման>> գրանցամատյանում դրա վերաբերյալ տվյալ պահին գրառումն չկատարելու հանգամանքը, ինչով խախտվել է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի>> 71-րդ կետի պահանջները, որի համար վերջինս խիստ նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ